ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ **«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՖԻԼՀԱՐՄՈՆԻԿ ՆՎԱԳԱԽՈՒՄԲ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԱԼՈՆԻԿԻ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ** **ք. Աթենք «22» հուլիսի 2025թ.**	**ΜΝΗΜΟΝΙΟ ΣΥΝΕΡΓΑΣΙΑΣ** ΜΕΤΑΞΥ ΤΗΣ ΕΘΝΙΚΗΣ ΦΙΛΑΡΜΟΝΙΚΗΣ ΟΡΧΗΣΤΡΑΣ ΤΗΣ ΑΡΜΕΝΙΑΣ Κ.ΜΚΟ ΚΑΙ ΤΟΥ ΟΡΓΑΝΙΣΜΟΥ ΜΕΓΑΡΟΥ ΜΟΥΣΙΚΗΣ ΘΕΣΣΑΛΟΝΙΚΗΣ **Αθήνα, 22 Ιουλίου 2025**
«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն), ի դեմս տնօրեն Նորայր Նազարյանի, ով գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմ 1), մի կողմից, և «Սալոնիկի համերգային դահլիճի կազմակերպություն» մասնավոր իրավունքի հիմքով գործող իրավաբանական անձը՝ (այսուհետ նաև՝ «Համերգային դահլիճ»), ի դեմս գեղարվեստական տնօրեն պարոն Խրիստոս Գալիլեասի, ով գործում է համերգասրահի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կողմ 2), մյուս կողմից, (այսուհետ միասին՝ Կողմեր), հաշվի առնելով Կողմերի համագործակցության կարևորությունը և նպատակ ունենալով աջակցել մշակույթի և արվեստի, ստեղծագործական գործունեության զարգացմանը, ինչպես նաև ցանկանալով նպաստել հայ և հույն երաժշտարվեստի նվաճումների հանրահռչակմանը, առաջնորդվելով երկու ժողովուրդների միջև մշակութային կապերի բազմակողմանի ամրապնդման	Αφενός, ο Κρατικός Μη Κερδοσκοπικός Οργανισμός «Εθνική Φιλαρμονική Ορχήστρα της Αρμενίας» (στο εξής ο «Οργανισμός»), όπως εκπροσωπείται από τον Διευθυντή, κ. Norayr Nazaryan, ενεργώντας δυνάμει του Καταστατικού του Οργανισμού (εφεξής το «Μέρος 1») και, αφετέρου, το Νομικό Πρόσωπο Ιδιωτικού Δικαίου «Οργανισμός Μεγάρου Μουσικής Θεσσαλονίκης» (στο εξής το «Μέγαρο Μουσικής»), όπως εκπροσωπείται από τον Καλλιτεχνικό Διευθυντή κ. Χρίστο Γαλιλαία, ενεργώντας δυνάμει του Καταστατικού του Μεγάρου Μουσικής (εφεξής το «Μέρος 2»), (εφεξής από κοινού τα «Μέρη»), αναγνωρίζοντας τη σημασία της συνεργασίας μεταξύ των Μερών, με στόχο την υποστήριξη της ανάπτυξης του πολιτισμού, της τέχνης και της δημιουργικής δραστηριότητας, και επιθυμώντας να συμβάλουν στην προώθηση των μουσικών επιτευγμάτων της Αρμενίας και της Ελλάδας, καθοδηγούμενα από τη δέσμευση για ενίσχυση των πολιτιστικών δεσμών και την προώθηση του διαπολιτισμικού διαλόγου μεταξύ των δύο εθνών, συνήψαν

և միջմշակութային երկխոսության ապահովման փոխադարձ պատրաստակամությամբ՝ կնքեցին սույն համագործակցության մասին հուշագիրը (այսուհետ՝ Հուշագիր) հետևյալի մասին.	το παρόν Μνημόνιο Συνεργασίας (εφεξής το «Μνημόνιο») ως εξής:
1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ	**1. ΑΝΤΙΚΕΙΜΕΝΟ ΜΝΗΜΟΝΙΟΥ**
1.1 Հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության և հունական օրենսդրության շրջանակներում համագործակցել Հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:	1.1 Δυνάμει του παρόντος Μνημονίου, τα Μέρη προτίθενται να συνεργαστούν στο πλαίσιο της νομοθεσίας της Δημοκρατίας της Αρμενίας και του ελληνικού δικαίου, στους τομείς που προσδιορίζονται στην Ενότητα 2 του παρόντος, αξιοποιώντας τις δυνατότητες, τους πόρους και την τεχνογνωσία τους.
1.2 Կողմերի միջև համագործակցությունը հիմնված կլինի պատասխանատվության և փոխադարձ տեղեկատվության տրամադրման սկզբունքների վրա:	1.2 Η συνεργασία μεταξύ των Μερών στις αρχές της υπευθυνότητας και της αμοιβαίας ανταλλαγής πληροφοριών.
1.3 Նախագծերն ու գործողությունները մշակելիս դիտարկվելու է փոխլրացման տարրը՝ համագործակցությունը պատշաճ կերպով իրականացնելու նպատակով:	1.3 Κατά την ανάπτυξη έργων και δραστηριοτήτων, λαμβάνεται υπόψη το στοιχείο της συμπληρωματικότητας, προκειμένου να διασφαλίζεται η ορθή υλοποίηση της συνεργασίας.
2.ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՄՈՒԹՅՈՒՆԸ	**2. ΤΟΜΕΙΣ ΣΥΝΕΡΓΑΣΙΑΣ ΚΑΙ ΔΕΣΜΕΥΣΕΙΣ Τ"Ν ΜΕΡ"Ν**
2.1 Հուշագրով, համագործակցության շրջանակներում Կողմերը պատրաստակամ են միավորել իրենց կարողությունները Կողմերի կանոնադրական խնդիրներից և նպատակներից բխող և երկուստեք հետաքրքրություն ներկայացնող ուղղություններով համագործակցության համար, որոնք միտված են մշակութային	Στο πλαίσιο του παρόντος Μνημονίου, τα Μέρη εκφράζουν την πρόθεσή τους να συνενώσουν τις δυνάμεις τους σε τομείς κοινού ενδιαφέροντος, που απορρέουν από τους καταστατικούς τους σκοπούς και στόχους, με σκοπό την οργάνωση κοινών πολιτιστικών εκδηλώσεων.

համատեղ միջոցառումների կազմակերպմանը:	
2.2«Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը պատրաստակամ է	**2.2 Ο Κρατικός Μη Κερδοσκοπικός Οργανισμός Εθνική Φιλαρμονική Ορχήστρα της Αρμενίας προτίθεται να:**
2.2.1 Սալոնիկի համերգային դահլիճի կողմից ներկայացված ստեղծագործական խմբերին և անվանի երաժիշտ-կատարողներին /երգիչներին, դիրիժորներին/ անվճար տրամադրել «Արամ Խաչատրյան» համերգասրահը փորձերի, համերգների և այլ միջոցառումների համար՝ անհրաժեշտ առկա տեխնիկական սարքավորումներով (լուսավորություն, ձայն, դաշնամուր և այլ գործիքներ)՝ հաշվի առնելով համերգասրահի առաջարկներն ու պահանջները փորձերի ժամանակացույցի և համերգների անցկացման վերաբերյալ,	2.2.1 Παρέχει δωρεάν την Αίθουσα Συναυλιών *Aram Khachaturian* σε καλλιτεχνικά σχήματα και διακεκριμένους μουσικούς/ερμηνευτές (τραγουδιστές, αρχιμουσικούς) που προτείνονται από το Μέγαρο Μουσικής Θεσσαλονίκης, για πρόβες, συναυλίες και άλλες εκδηλώσεις, καθώς και τον αναγκαίο διαθέσιμο τεχνικό εξοπλισμό (φωτισμός, ήχος, πιάνο και λοιπά μουσικά όργανα), λαμβάνοντας υπόψη τις προτάσεις και απαιτήσεις του Μεγάρου αναφορικά με το πρόγραμμα των προβών και τη διεξαγωγή των συναυλιών.
2.2.2 Ապահովել «Արամ Խաչատրյան» համերգասրահի, երաժիշտների և հանդիսատեսի անվտանգությունը համատեղ միջոցառումների իրականացման ընթացքում,	2.2.2 Διασφαλίζει την ασφάλεια της Αίθουσας Συναυλιών *Aram Khachaturian*, των μουσικών και του κοινού κατά την υλοποίηση των κοινών εκδηλώσεων.
2.2.3 Կազմակերպել երաժշտական գործիքների պահպանման, երաժիշտ-կատարողների և ստեղծագործական խմբերի համար նախատեսված զգեստափոխման սենյակների հետ կապված բոլոր հարցերը:	2.2.3 Διευθετεί όλα τα ζητήματα που σχετίζονται με την αποθήκευση μουσικών οργάνων και την παροχή καμαρινιών για τους ερμηνευτές και τα καλλιτεχνικά σχήματα.
2.3 Սալոնիկի համերգային դահլիճի կազմակերպությունը պատրաստակամ է՝	**2.3 Ο Οργανισμός Μεγάρου Μουσικής Θεσσαλονίκης προτίθεται να:**

2.3.1 Անվճար տրամադրել Սալոնիկի համերգային դահլիճը Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբին (այսուհետ նաև՝ Նվագախումբ) փորձերի, համերգների և այլ միջոցառումների համար՝ անհրաժեշտ առկա տեխնիկական սարքավորումներով (լուսավորություն, ձայն, դաշնամուր և այլ գործիքներ)՝ հաշվի առնելով Համերգային դահլիճի առաջարկներն ու պահանջները փորձերի ժամանակացույցի և համերգների անցկացման վերաբերյալ,	2.3.1 Παρέχει δωρεάν την Αίθουσα Συναυλιών του Μεγάρου Μουσικής Θεσσαλονίκης στην Εθνική Φιλαρμονική Ορχήστρα της Αρμενίας (εφεξής επίσης καλούμενη «η Ορχήστρα») για πρόβες, συναυλίες και άλλες εκδηλώσεις, καθώς και τον αναγκαίο διαθέσιμο τεχνικό εξοπλισμό (φωτισμός, ήχος, πιάνο και λοιπά μουσικά όργανα), λαμβάνοντας υπόψη τις προτάσεις και απαιτήσεις του Μεγάρου Μουσικής αναφορικά με το πρόγραμμα των προβών και τη διεξαγωγή των συναυλιών.
2.3.2 Ապահովել Սալոնիկի համերգային դահլիճի, երաժիշտների և հանդիսատեսի անվտանգությունը միջոցառումների իրականացման ընթացքում,	2.3.2 Διασφαλίζει την ασφάλεια του Μεγάρου Μουσικής Θεσσαλονίκης, των μουσικών και του κοινού κατά την υλοποίηση των εκδηλώσεων.
2.3.3 Կազմակերպել երաժշտական գործիքների պահպանման և Նվագախմբի երաժիշտների համար նախատեսված զգեստափոխման սենյակների հետ կապված բոլոր հարցերը,	2.3.3 Διευθετεί όλα τα ζητήματα που σχετίζονται με την αποθήκευση μουσικών οργάνων και την παροχή καμαρινιών για τους μουσικούς της Ορχήστρας.
2.3.4 Ապահովել գովազդային և մարքեթինգային աջակցություն Նվագախմբի միջոցառումների լուսաբանման համար, ներառյալ՝ տեղադրում ազդագրերում, կայքում և սոցիալական ցանցերում՝ օգտագործելով Նվագախմբի տարբերանշանն իր գովազդային նյութերում և կայքում:	2.3.4 Παρέχει υποστήριξη ως προς τη διαφήμιση και την προβολή των εκδηλώσεων της Ορχήστρας, συμπεριλαμβανομένης της προβολής και χρήσης του λογότυπου της Ορχήστρας στο προωθητικό υλικό, στις αφίσες, τα κοινωνικά δίκτυα και στην ιστοσελίδα του Μεγάρου.
3. ՀԱՄԱՏԵՂ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ	**3. ΧΡΗΜΑΤΟΔΟΤΗΣΗ ΚΟΙΝ"Ν ΠΡΟΓΡΑΜΜΑΤ"Ν ΚΑΙ ΕΚΔΗΛ"ΣΕ"Ν**
3.1 Հուշագրով նախատեսված ծրագրերի, միջոցառումների և այլ	3.1 Η χρηματοδότηση προγραμμάτων, εκδηλώσεων και λοιπών δραστηριοτήτων

գործողությունների ֆինանսավորումն իրականացվում է համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով:	που προβλέπονται στο παρόν Μνημόνιο πραγματοποιείται μέσω της σύναψης σχετικών συμβάσεων.
4. ՀՈՒՇԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	**4. ΥΛΟΠΟΙΗΣΗ ΜΝΗΜΟΝΙΟΥ**
4.1 Հուշագրի շրջանակներում իրականացվող գործողությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության և հունական օրենսդրությամբ սահմանված կարգով Կողմերը կարող են կնքել լրացուցիչ պայմանագրեր և համաձայնագրեր, որոնցով կհստակեցվեն Հուշագրի շրջանակներում իրականացվող գործողությունները:	4.1 Για τη διασφάλιση της εκτέλεσης των δράσεων στο πλαίσιο του παρόντος Μνημονίου, τα Μέρη δύνανται να συνάπτουν επιπρόσθετες συμβάσεις και συμφωνίες, δυνάμει της διαδικασίας που προβλέπεται από τη νομοθεσία της Δημοκρατίας της Αρμενίας και του ελληνικού δικαίου, οι οποίες θα καθορίζουν τις επιμέρους ενέργειες που θα υλοποιούνται βάσει του Μνημονίου.
4.2 Կողմերից յուրաքանչյուրը համաձայնվում է բարեխիղճ կատարել Հուշագրով իր ստանձնած հանձնառությունները և պատասխանատվություն կրել դրանց պատշաճ իրականացման համար:	4.2 Κάθε Μέρος συμφωνεί να εκπληρώνει πιστά τις υποχρεώσεις του βάσει του Μνημονίου και να φέρει την ευθύνη για την ορθή υλοποίησή τους.
5.ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	**5. ΔΙΑΡΚΕΙΑ ΜΝΗΜΟΝΙΟΥ**
5.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:	5.1 Το παρόν Μνημόνιο τίθεται σε ισχύ από την ημερομηνία υπογραφής του από τα Μέρη και παραμένει σε ισχύ για αόριστο χρονικό διάστημα.
5.2 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:	5.2 Το παρόν Μνημόνιο δύναται να καταγγελθεί πρόωρα από οποιοδήποτε Μέρος, με την αποστολή έγγραφης ειδοποίησης στο άλλο Μέρος, τουλάχιστον ένα (1) μήνα πριν από την επιθυμητή ημερομηνία λήξης.
5.3 Հուշագրի գործողության դադարեցումը չպետք է ազդի դրա	5.3 Η λύση του Μνημονίου δεν επηρεάζει τις υποχρεώσεις που αναλήφθηκαν κατά τη

գործողությունների ֆինանսավորումն իրականացվում է համապատասխան պայմանագրեր կնքելու միջոցով:	που προβλέπονται στο παρόν Μνημόνιο πραγματοποιείται μέσω της σύναψης σχετικών συμβάσεων.
4. ՀՈՒՇԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ	**4. ΥΛΟΠΟΙΗΣΗ ΜΝΗΜΟΝΙΟΥ**
4.1 Հուշագրի շրջանակներում իրականացվող գործողությունների կատարումն ապահովելու նպատակով Հայաստանի Հանրապետության և հունական օրենսդրությամբ սահմանված կարգով Կողմերը կարող են կնքել լրացուցիչ պայմանագրեր և համաձայնագրեր, որոնցով կհստակեցվեն Հուշագրի շրջանակներում իրականացվող գործողությունները:	4.1 Για τη διασφάλιση της εκτέλεσης των δράσεων στο πλαίσιο του παρόντος Μνημονίου, τα Μέρη δύνανται να συνάπτουν επιπρόσθετες συμβάσεις και συμφωνίες, δυνάμει της διαδικασίας που προβλέπεται από τη νομοθεσία της Δημοκρατίας της Αρμενίας και του ελληνικού δικαίου, οι οποίες θα καθορίζουν τις επιμέρους ενέργειες που θα υλοποιούνται βάσει του Μνημονίου.
4.2 Կողմերից յուրաքանչյուրը համաձայնվում է բարեխիղճ կատարել Հուշագրով իր ստանձնած հանձնառությունները և պատասխանատվություն կրել դրանց պատշաճ իրականացման համար:	4.2 Κάθε Μέρος συμφωνεί να εκπληρώνει πιστά τις υποχρεώσεις του βάσει του Μνημονίου και να φέρει την ευθύνη για την ορθή υλοποίησή τους.
5.ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ	**5. ΔΙΑΡΚΕΙΑ ΜΝΗΜΟΝΙΟΥ**
5.1 Հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է անորոշ ժամկետով:	5.1 Το παρόν Μνημόνιο τίθεται σε ισχύ από την ημερομηνία υπογραφής του από τα Μέρη και παραμένει σε ισχύ για αόριστο χρονικό διάστημα.
5.2 Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:	5.2 Το παρόν Μνημόνιο δύναται να καταγγελθεί πρόωρα από οποιοδήποτε Μέρος, με την αποστολή έγγραφης ειδοποίησης στο άλλο Μέρος, τουλάχιστον ένα (1) μήνα πριν από την επιθυμητή ημερομηνία λήξης.
5.3 Հուշագրի գործողության դադարեցումը չպետք է ազդի դրա	5.3 Η λύση του Μνημονίου δεν επηρεάζει τις υποχρεώσεις που αναλήφθηκαν κατά τη

գործողության ընթացքում Կողմերի ստանձնած պարտավորությունների վրա և դրա շրջանակներում կնքված պայմանագրերի և համաձայնագրերի գործողության վրա, եթե Կողմերն այլ համաձայնության չեն եկել:	διάρκεια της ισχύος του, ούτε την ισχύ των συμβάσεων και συμφωνιών που συνάφθηκαν στο πλαίσιο αυτού, εκτός εάν τα Μέρη συμφωνήσουν διαφορετικά.
6. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ	**6. ΔΙΑΔΙΚΑΣΙΑ ΕΠΙΛΥΣΗΣ ΔΙΑΦΟΡ"Ν**
6.1 Սույն հուշագրի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում Հայաստանի Հանրապետության և հունական օրենսդրությամբ սահմանված կարգով:	6.1 Οποιεσδήποτε διαφορές ή διαφωνίες προκύψουν κατά την εκτέλεση του παρόντος Μνημονίου επιλύονται μέσω διαπραγματεύσεων και, εφόσον αυτό δεν καταστεί δυνατό, σύμφωνα με τη νομοθεσία της Δημοκρατίας της Αρμενίας και το ελληνικό δίκαιο.
7. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ	**7. ΛΟΙΠΕΣ ΔΙΑΤΑΞΕΙΣ**
7.1 Սույն հուշագիրը կնքված է հայերեն և հունարեն լեզուներով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:	7.1 Το παρόν Μνημόνιο συντάσσεται στην αρμενική και στην ελληνική γλώσσα, σε δύο αντίγραφα με ισοδύναμη νομική ισχύ. Κάθε Μέρος λαμβάνει ένα αντίγραφο.
7.2 Սույն հուշագրի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության և հունական օրենսդրության իրավական կարգավորումները:	7.2 Στο παρόν Μνημόνιο εφαρμόζονται οι νομικές ρυθμίσεις της Δημοκρατίας της Αρμενίας και το ελληνικό δίκαιο.
8. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ***ԿՈՂՄ*** «Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբ» ՊՈԱԿ Հայաստանի Հանրապետություն ք. Երևան, Մաշտոցի 46	**8. ΝΟΜΙΜΕΣ ΔΙΕΥΘΥΝΣΕΙΣ ΚΑΙ ΥΠΟΓΡΑΦΕΣ ΜΕΡ"Ν** ***ΜΕΡΟΣ*** Κρατικός Μη Κερδοσκοπικός Οργανισμός «Εθνική Φιλαρμονική Ορχήστρα της Αρμενίας» Δημοκρατία της Αρμενίας Γερεβάν, Λεωφόρος Mashtots 46

ՀՎՀՀ՝ 02508792 **Տնօրեն՝ Նորայր Նազարյան** _____	Α.Φ.Μ.: 02508792 **Διευθυντής: Norayr Nazaryan** _____
ԿՈՂՄ Սալոնիկի համերգային դահլիճի կազմակերպություն Հունաստանի Հանրապետություն ք. Սալոնիկ, **Գեղարվեստական տնօրեն՝ Խրիստոս Գալիլեաս** _____	***ΜΕΡΟΣ*** Οργανισμός Μεγάρου Μουσικής Θεσσαλονίκης Ελληνική Δημοκρατία, Θεσσαλονίκη **Καλλιτεχνικός Διευθυντής: Χρίστος Γαλιλαίας** _____